PROJECT


« Ա-ԷՌ ՓՐՈՋԵԿՏ » ՍՊԸ
ԼԻՑԵՆԶԻԱ 001112
ՀՀ ք. Երևան ,Նոր Նորք,
Բորյան փ,.շ. 4/1,Բն.24
Հեռ՝ 077 – 27 - 97 – 57
Էլ. Փոստ՝ a-r.project@mail.ru

"A-R PROJECT" LLC
LICENSE 001112
RA c. Yerevan ,Nor Norq,
Boryan street 4/1,Ap.24
Tel՝ 077 – 27 - 97 – 57
e-mail a-r.project@mail.ru



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-001112, I-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-09-27, «Ա-ԷՌ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, ԲՈՐՅԱՆ Փ., 4/1, 24 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 27.09.2029թ.

N 02/18

«25» փետրվար 2026թ.

*Պատվիրատու՝* **Քաջարանի համայնքապետարան N 03**

*Նախագծող՝* **«Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ**

*Տնօրեն՝* Ա. Պողոսյան

<<Ա-ԷՌ ՓՐՈՋԵԿՏ>> ՍՊԸ -ն նախագծային պարզ փորձաքննության դիտարկելով ՀՀ Սյունիքի մարզ,Քաջարան համայնքի Խանջյան -Տերյան փողոցի բակային հատվածից թիվ 1 բազմաբնակարան շենքից մինչև թիվ 3ա բազմաբնակարան շենք բակային հատվածի,դեպի դրպոց տանող ճանապարհի,Տերյան փողոցի հենապատի վերակառուցման աշխատանքների փաստաթղթերը ՝ երաշխավորում է հաստատման:

Առդիր ՝ եզրակացություն 3 էջից

**Տնօրեն՝** **Ա.Գրիգորյան**

« Ա-ԷՌ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ

Տնօրեն՝ Ա.Գրիգորյան

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ Սյունիքի մարզ,Քաջարան համայնքի Խանջյան -Տերյան փողոցի բակային հատվածից թիվ 1 բազմաբնակարան շենքից մինչև թիվ 3ա բազմաբնակարան շենք բակային հատվածի,դեպի դրպոց տանող ճանապարհի,Տերյան փողոցի հենապատի վերակառուցման աշխատանքների փաստաթղթեր**

***Պատվիրատու՝*** **Քաջարանի համայնքապետարան N 03**
***Նախագծող՝*** **«Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ » ՍՊԸ**
***Տնօրեն՝*** **Ա. Պողոսյան**

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

**Նախագծի կազմում ներառված է**

1.Ճարտարապետա-շինարարական մաս
2.Նախահաշիվ

**Ելակետային տվյալներում ներառված են հետևյալ փաստաթղթերը՝**

1.Նախագծային կազմակերպության աշխատակազմի արտոնագրերի պատճները/ճարտարապետ / ՀՀ քաղաքաշինության կողմից տրամադրված լիցենզիայի պատճենները:
2. Քաջարան համայնքի կողմից տրված **«22» դեկտեմբերի 2025թ. N ՆԹ-11789-25** ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Ընդհանուր բացատրագրում նեռառված է նախագծի մշակման հիմքը,տարածքի բնութագիրը:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեոմորֆոլոգիական տեսակետից Հետազոտվող տարածքը գտնվում է Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջին, Ողջի գետի հովտում, մարզկենտրոնից 18-20 կմ հարավ-արևմուտք, ծովի մակերևույթից 1600-1800 մ բարձրության վրա:
Կլիման Համաձայն ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմերի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է շինարարության համար «ցուրտ» (Ց) կլիմայական շրջանում և բնութագրվում է շատ ցուրտ, քամոտ, խոնավ ձմեռներով և զով, օպտիմալ խոնավ ամառներով: Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝

• Տարեկան միջին ջերմաստիճանը 6.8 °C

- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 35°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -22°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 68%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 67%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 52%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 550-600մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 1.2մ/վ :
- Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 24մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱ-ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաջարանի համայնքապետարանի կարիքների համար՝ Խանջյան -Տերյան փողոցի բակային հատվածից թիվ 1 բազմաբնակարան շենքից մինչև թիվ 3ա բազմաբնակարան շենք բակային հատվածի,դեպի դրպոց տանող ճանապարհի,Տերյան փողոցի հենապատի վերակառուցման աշխատանքների նախագիծ համար հիմք են հանդիսացել հետևյալ փաստաթղթերը՝
Ըստ նախագծի նախատեսվում է Խանջյան-Տերյան փողոցի բակային հատվածից թիվ 1 բազմաբնակարան շենքից մինչև 3ա բազմաբնակարան շենքը կատարել բակային բարեկարգում:Որն իր մեջ ներառում է հետևյալ աշխատանքները
Թիվ 3ա շենքից դեպի դպրոց տանող հենապատը բակային կողմից նախատեսվում է վերանորոգել,Հենապատի վրա առկա մետաղական բազրիքը նախատեսվում է թողնել նույը և ներկել ամբողջովին:
Բակային տարածքից հենապատի մակերևույթը նախատեսվում է իրականացնել ց/ավազե սվաղով երեսապատում:Բակային տարածքից դեպի ճանապար տանող աստիճանները վերանորոգված են:
Թիվ 1 բազմաբնակարան շենքից մինչև թիվ 3ա բազմաբնակարան շենք հարակից ասֆալտբետոնե շերտը գտնվում է ոչ բարվոք վիճակում,այն նախատեսվում է քանդել հիմնովին շերտերի հետ միասին և իրականացնել նոր ասֆալտապատում:
Նշված տարածքում գոյություն ունի ցայտաղբյուր, որի հարթակի երեսապատման բազալտե սալիկները նախատեսվում են փոխարինել նորերով:
Բազմաբնակարան 2 և 3 շենքերին հարակից գոյություն ունեցող նկուղային հարկ իջնող արտաքին բետոնե աստիճանները նախատեսվում են վերանորոգել և իրականացնել բազալտե երեսապատում:
Աստիճանների վրա նախատեսված է տեղադրել մետաղական բազրիք անվտանգության նկատառումներով:
Խանջյան փողոցից դեպի դպրոց տանող և տերյան փողոցի երկայնքով ճանապարհին կից գոյություն ունեցող հենապատերը գտնվում են ոչ բարվոք վիճակում և նախատեսվում են նրանց վերանորոգում:
Հենապատերի վրա նախատեսվում է իրականացնել բազալտե երեսապատում ,բազալտե գլխադիրների տեղադրում և որոշ տեղերում գեղարվեստական նկարազարդում:
Նախատեսվում է Տերյան փողոցի հենապատի վերակառուցում Ճանապարհի:

ՆԱԽԱՀԱՇԻՎ
Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն
17 հոկտեմբերի 2024 թվականի N 1656-Ն :
Միջին աշխատավարձը ընդունված է 274368 դրամ:
Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ.գները և նորմերը,որոնց վրա կիռարվել են հետևյալ գործակիցները՝
- Հիմնական աշխատավարձ 2534.58
- Մեքենաների շահագործում 3034.86
- Տրանսպորտային ծախսերի գործակիցը 1.129

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսնրի նախարարության N01.2026թ ինֆորմացիոն տեղեկագրից,նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները՝
- Այլ նյութեր 5%
- Պահեստավորման ծախսեր 2%
- Նախահաշվում հաշվարկված է նաև՝
- Վերադիր ծախսեր 13,3%
- Շահույթ 11,0%
- Ա.Ա.Հ 20,0%
Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր:

**Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը « Ա-ԷՌ ՓՐՈՋԵԿՏ » ՍՊԸ-ն նշում է ,որ՝**
**1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:**
**2.Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:**
**3.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանում է ՀՀ քաղշին,նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին:**
**4.Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները,լրացումները,այլընտրանքային լուծումնրը քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:**
**5.Նախահաշվային ընդհանուր արժեքը կազմում է՝ 194647.148 հազար դրամ ներառյալ ԱԱՀ-ն:**

<u>Ուսումնասիրելով ներկայացված նախագծերը</u>
Փորձաքննությունը երաշխավորում է **փաստաթղթերի համապատասխանությունը** ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին,
Նախագիծը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել **համաձայնեցման և հաստատման:**

**Տնօրեն** Ա.Գրիգորյան

**Ճարտարապետ** Հ.Բաբայան

Կոնստրուկտոր Ա.Գրիգորյան